**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/07-3-1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**N ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/07-3 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Գյումրի 08 հունիսի 2017 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Խ. Պողոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Փարվանա>> ԱԿ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Բեյբությանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 10-ին կնքված N: ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/07-3 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 5.1.2 և 8.4 կետերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N: 571-Ն որոշումը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կոմիտասի փողոց №1 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման, Մարալիկ համայնքի Մաղաքյան փողոցի №4 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի խոհանոցի շենքի վերանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք) և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Պայմանագրի և սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 18 402 000.0 (տասնութ միլիոն չորս հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, որից 3 067 000.0 (երեք միլիոն վաթսունյոթ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 1 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը, համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Գյումրի Գ. Նժդեհի 16 | ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ Կումայրի մ/ճ |
| | հ/հ 1930061943210100 |
| ՀՎՀՀ 05507437 | ՀՎՀՀ 05803035 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

ՓԱՐՎԱՆԱ ПАРВАНА 05803035 Կ.Տ

*Հավելված թիվ 1*
*08 հունիսի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/07-3-1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Ախուրյան համայնքի Կոմիտասի փողոց №1 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 6264000.0 | 6264000.0 | 6264000.0 | 6264000.0 | 6264000.0 | 6264000.0 | 6264000.0 | 6264000.0 |
| 2 | Մարալիկ համայնքի Մաղաթյան փողոցի №4 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 3114000.0 | 3114000.0 | 3114000.0 | 3114000.0 | 3114000.0 | 3114000.0 | 3114000.0 | 3114000.0 |
| 3 | Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի խոհանոցի շենքի վերանորոգում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 9024000.0 | 9024000.0 | 9024000.0 | 9024000.0 | 9024000.0 | 9024000.0 | 9024000.0 | 9024000.0 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ ____________ ՀՎՀՀ 05507437

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան
«Կոնվերսբանկ» ՓԲԸ Կումայրի մ/ճ
հ/հ 1930061943210100
ՀՎՀՀ 05803035

(ստորագրություն)

Կ.Տ